# Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ւ Մ

Խնկոյան համայնքի ավագանու նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| Խնկոյան | Համայնքի ավագանու նիստ | 23.06.2021թ. | 11:30 | Խնկոյանի համայնքապետարան (գ. Խնկոյան 1 փ. 19 շ.) |

**ՆԱԽԱԳԻԾ N 20**

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ.
ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
------------------------------------------------------------

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Խնկոյան համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 23-ի հերթական նիստի օրակարգը.

1. Խնկոյան համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 23-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ. Վ. Համբարձումյան

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ. Վ. Համբարձումյան

**ՆԱԽԱԳԻԾ N 21-Ա**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՄԱՍԻՆ**
----------------------------------------------------------------------------------------------
/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝ Խնկոյան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայնիհավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրելբնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդողօրվանից:

**Հավելված**
**ՀՀ Լոռու մարզի Խնկոյան համայնքի ավագանու**
**2021 թվականի հունիսի 23-ի N 21-Ա որոշման**

**Ց Ո Ւ Ց Ա Կ**

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ**
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ**
**ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1. Վարդան Մանուկյան Վարդգեսի քսան հազար դրամ, / սոց. օգնություն/
2. Ռուզաննա Վարդանյան Վահանի քսանհինգ հազար դրամ, / սոց. օգնություն/: